

նայ ուշադիր ուսումնասէրին՝ Աստուա-
ծային կատակերգութեան առաջին ընթեր-
ցումին իսկ, վասն զի յայտնի է բանաս-
տեղծին ճիշդ գեղեցկացնելու համար այս
միջին թագաւորութիւնը՝ որ ալ դժոխք չէ
և դեռ արքայութիւնն ալ չէ, այլ մէկուն
ու միւսին երեւոյթն ունի, Հոն մուծած
դրուագներն ու պատկերները՝ կենդանի
ու բնական նկար մը չեն ընծայեր այդ
երգին՝ այլ աւելի մեծդի գոյնզգոյն խճանը-
կարի մ'երեւոյթը կու տան:

Տանդէ, չի հակասելու համար տեղւոյն
բնութեան ու մեղաւորներուն նկարագրին,
ստիպուած ըլլալով չափաւորելու ծա-
րայեղ կրքերուն թափը, հոս նուազ ան-
կեղծ կ'երեւի, և եթէ նոյն իսկ երբեմն
ցոյց կու տայ իր բոլոր ուղղութիւնը, իս-
կոյն կը նշմարէք թէ ան մտազբաղ վայր-

կեանի մը մէջ թոյլ տուած է որ սրտէն
դուրս ելլէ իր բնաւորութեան պարզ ար-
տայայտութիւնը:

Դժոխքն ու Արքայութիւնը զբաժ ժա-
մանակ՝ Տանդէ ամբողջապէս ու առանց
որ և է տառամտութեան անձնատուր եղած
էր իր ներսը յուզուող կրքերուն. ինքն է՝
իսկապէս ինքն է՝ որ կը տառապի ու կը
վայելէ, որ կ'անիծէ ու կ'օրհնէ, որ
կ'ամբաստանէ ու կ'արձկէ:

Քաւարանին մէջ ընդհակառակը՝ ինք-
զինքը զգալու ստիպուած՝ քողով մը
պատած է հոգին, իր սեպհական անհա-
տականութիւնը ստուերի մէջ ծածկած է:
Այս պատճառներուն համար Քաւարանը,
որ անցքի տեղն է, նուազ յաջողած է
քան միւս երկու երգերը:

Թարգ. Հ. Ս. ՏԵՐ-ՄՈՎՍԵՍԵԱՆ

ՀԱՄԲՈՐԴԵԼՈՒ ՄՈԼՈՒԹԻՒՆԵՐ

(Շար. ՏԽ Բազմ. էջ 271)

Գ. ԱՐԱՐՈՒԱԾ

ԴԱՐՁԸ

Աստիճան Արարուածին սրահը. — Կատարնի
և Պաշտոնի յուսանկարներն պատեն կախուած,
և և:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

Պետրոս (փետրէ փռնեղով մը փոշիներ կը
մաքրէ). — Ո՛հ, Աստուած իմ. ճշմարիտ է
արդեօք. ինչ երջանկութիւն և ինչ փառք
կատարնի համար ... Հը ... Ապտեմիայի
գիտնականներէն՝ մրցանակի համար ոսկիէ
չքանչախ առնուլ մայրաքաղաքին ամենէն աւե-
լի նշանաւոր արուեստագէտներէն վեր դա-
ստիլ, ասիկայ ամենամեծ յաջողութիւն մ'է:
Եթէ ես չանած ըլլայի զայն, ոչ մէկը կարող էր
քովս մօտենալ ... Ես կայսեր հուստար պի-
տի կարծէի զիս ... սակայն ինքը այնպէս չէ,
չի ցուցներ, ոչ կը հպարտանայ և ոչ ալ
վրան կը մտածէ ... Ո՛, այո, նա առժամ
ուրիշ մտածմունքներ ունի, իր եղբայրը ...

ստոյգ է որ լաւ ազատեցաւ պարոն Պաշտոն
հոն՝ Բոնարդէնին պանդոկին մէջ: Վեց ամիսէ
ի վեր որ մեկնած է նա Քերկուլէ նաւապե-
տին հետ, իմ երիտասարդ տէրս մտածմուն-
քով և նեղութեամբ կը տանջուի: Նա շատ
բարի է, և այնչափ զինքը կը սիրեմ որ
կեանքս անգամ կու տայի իր երջանկութեան
համար: Հագուագիւտ է սա երկու եղբայր
ունեցածին նման հարազատ սրտեր գտնելու
լուս, ահա գրասենեկէն դուրս կ'ելնէ ... Զար-
մանք, ուրախութիւն մը կայ դէմքին վրայ:
(Կատարն կը մտնէ լրագիր մը ձեռքն առած):

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ՊԵՏՐՈՍ և ԿԱՍՏՈՆ

Կատարն. — Սիրելիդ իմ Պետրոս ... Եթէ գիտ-
նայի արքան երջանիկ եմ:
Պետրոս. — Ո՛հ, ուրախ եմ ... Այդ բանը քիչ
անգամ կը հանդիպի:
Կատարն. — Պիտի կարենայիք արդեօք գուշա-
կել այն լուրը զոր հիմայ առի:
Պետրոս. — Ապահով՝ պարոն եղբորդ վրայօք
պիտի ըլլայ:

Կատարում. — Գուշակէ՛, տեսեմ, Պետրոս: Պետրոս. — Այդ գործին մէջ ճարտար չեմ, սա, կայն կը գուշակեմ որ լաւ վիճակի մէջ պէտք է ըլլայ ինքը, որուն համար ուրախակից կ'ըլլամ քեզի հետ:

Կատարում. — Պապոս Գաղղիա դարձած է: Պետրոս. — Ստուգի՛ւ, Պարոն:

Կատարում. — Երեւակայէ՛ դու ուրախութիւնս ... իմ խեղճ եղբայրս. պիտի տեսնեմ զինքը, պիտի ողջագուրեմ ... Կ'իմանամ երջանկու-թեան չափը ...

Պետրոս. — Այո՛, այո՛ Պարոն, կ'իմանամ գայն է կը մասնակցիմ բոլոր սրտովս:

Կատարում. — Ահաւասիկ լրագրին յօդուածը, (կը կտրդայ) Ժան — Պար՛ Գերկուլէյ նաւապետին հրամանատարութեան ներքէ՛ Գուլոնի նաւա-հանդիսը հասաւ: Այս զբահաւորին նաւա-տիներն իրենց քաջութեամբ նշանաւոր է-ղած են Ալեքսիոյ մէջ:

Պետրոս (ձեռքերը շփելով). — Ես ապահով եմ որ պարոն Պապոս մեծ դեր ունեցած պիտի ըլլայ այս գործին մէջ:

Կատարում. — Այն սիրելի՛ եղբայրս... ո՛հ, ի՛նչ ուրախութիւն... Սակայն լսէ՛ Պետրոս. ապա թէ՛ կուոյն մէջ վիրաւորուած ըլլայ նա:

Պետրոս. — Բա՛, բա՛...

Կատարում. — Գնդակներն մարդկանց մէջ գանա-գանութիւն չեն դնէր և առմէր, կը մէկդի կեցիր չեն գոչեր... Ո՛հ, Տէր իմ, ապա եթէ համախառն վերադառնայ...:

Պետրոս. — Ապահով եղիր Պարոն. Գերկուլէյ նաւապետն չափազանց կը սիրէ զինքը, ան-կարելի է որ հայրական մասնաւոր խնամքով մը հսկած ըլլայ անոր վրայ:

Կատարում. — Բայց լրագիրը անոնց հասնիլը քա-նի մը օրերէ ի վեր ծանուցեր է, և ես չեմ հասկնար ինչո՛ւ գտնէ ինծի երկտող մ'իսկ չը-գրեց:

Պետրոս. — Լաւագոյն կը համարի անձամբ բե-րելու քեզ թուղթը:

Կատարում. — Այս ամենը զիս անհանգիստ կ'ը-նեն... որովհետեւ նա պէտք էր, կը ըրէրապէս, գուշակել իմ անհամբերութիւնս. և կրնար մինչև հիմա Բաբիզ եկած ըլլալ:

Պետրոս. — Ահա անգուտ մտածութիւններով գրեզ կը նեղես, կարծես թէ կ'ուզես գրեզ ան-հանգստութեանց բաւոյրին մէջ ձգել, մինչդեռ պատեմա մը չեմ տեսներ. կը համարի՛ս թէ կրնայ նաւաստի մը ըստ կամս իր տունը դառնալ: Պէտք է հրաման խնդրէ, և սպասէ որ... Համբերութիւն տէր իմ, նա փոյն տեսնէն հոս՛ մեր քով կ'ըլլայ, նախազգացում մը կ'ի-մանամ:

Կատարում. — Գուշակութիւնդ սիրով կ'ընդունիմ, բայց անհամբերութիւն կը զգամ, որ ժա-մենի՛ ինձ տարինք կ'երեցնէ:

Պետրոս. — Ահա յարմար ատենին կու գայ պարոն Տիւրքէ՛ քեզ գրացնելու և ժամանակը աւելի հաճոյ անցնել տալու համար: (Տիւրքէ ներս կը մտնէ):

ՏԵՍԻԼ ԵՐԲՐԻ

ԵՆՈՆԵՐԸ Ե Գ. ՏԻՒՐԻԵ

Կատարում (այնուամիջ). — Պարոն Տիւրքէ՛, ճիշդ ժամանակին կու գաս մասնակցելու բարի լուրի մը:

Պ. Տիւրքէ. — Ես այ քեզի ախորժելի լուր մը հա-ղորդելու կու գայի:

Կատարում. — Կարծեմ թէ այդ՛ իմ ըսելիքս աւելի հաճելի պիտի չլլայ:

Պ. Տիւրքէ. — Այսինքն...

Կատարում. — Այսինքն... այսինքն որ իմ եղբայրս Գաղղիա դարձած է: Լրագիրը Ժան — Պար անուն նաւուն Գուլոն հասնիլը կը ծանու-ցանէ:

Պ. Տիւրքէ. — Ստուգի՛ւ, այն խեղճ պ. Պապոսը Գաղղիա դարձած է... Ո՛հ, ուրախութիւն մ'է այդ, որուն իրացնէ արժանի է ինք:

Կատարում. — Ինչպէս կը սպասեմ զինքը տես-նելու և սիրով ողջագուրելու... վեց ամիս է որ իրարմէ բաժնուած ենք. վեց ամիս լուռ-թիւն մը զոր իր յանցանքին քառութեան համար կը կրեմ և և այս վեց ամիսներն կապարի լծակն կը ծանորանան իմ սրտիս վրայ:

Պ. Տիւրքէ. — Ո՛հ, թէ խորհած ըլլար այս առատու Բաբիզ հասնելու, Բաբիտ պիտի ու-նենար իր եղբոր փառաց հանդիսին ներկայ գտնուիլ:

Կատարում. — Ուրիշ դեռ ի՛նչ կայ պարոն Տիւ-րքէ...

Պ. Տիւրքէ. — Փորագրի: արուեստագիտաց Եանձ-նաժողովը պատգամաւոր կը զրկէ քեզ, շնորհ-հաւորելու համար քու յաշոգութիւնը մրցման մէջ:

Պետրոս (ցած ձայնով). — Արդարեւ մեք անոր արժանի ենք և այդ պարտնայք իրենց պարո-նք կը կատարեն:

Կատարում. — Զափազանց պատիւ է զոր կ'ուզեն անոնք ինձ ընել:

Պ. Տիւրքէ. — Եւ այս, ուրեմն, յանհուն պէտք է քեզ քաշալերէ, սիրելի բարեկամ:

Կատարում. — Հա՛ մասնաւոր անոր համար, որ ձեզի նման արժանաւոր ուսուցիչ մ'ունիմ:

Պ. Տիւրքէ. — Ամեն ոք գիտէ որ դու իրաւամբ արժանի դատուեցար այդ քթաշաշին և Եանձ-նաժողովը այս պատիւն ուղղակի, Կատարում, քու տաղանդդ համար կ'ընէ, որ հաւասար է քու համաստութեանը: Այս պայտօնական գործը որչափ քեզդ՛ նոյնչափ ևս գայն ընող-ներն կը պատուէ:

Պետրոս (ցած). — Եան ճիշդ է:

Կատարում. — Եւ սակայն ես ամենեկին բան մը ըրած չեմ, որ այդպիսի պատասխան շնորհ-քի մը արժանաւորութիւնը իմ վրաս տես-նեմ:

Պ. Տիւրքէ. — Գեղարուեստագէտք քու վրադ վստահ են, մինչև հիմա խոստացածներդ կա-տարեցիր, և որովհետեւ քու ապագայիդ վրայ մեծ յոյս ունին, արդ, ալ աւելի քեզ քաշա-լերելու համար կ'ընեն քեզի այս պատիւը:

կատարեմ. — Բոլոր այդ պատերը վարժապետիդ է (ձեռքը սևղմելով), եթէ իմ քննիչներուս հաճութեան արժանի գործ մ'ըրի, այդ՝ միթէ ձեզի պարտական չեմ:

Պ. Տիւրքի. — Փեզմէ չեմ ծածկեր, սիրելի բարեկամ, որ քու վաստկած բոլոր փառքդ՝ ինձ պատու է, այս ճիշդ է. և ո՞վ է որ չի պարծիր այսպիսի աշակերտ մը ունենալուն:

Պետրոս. — Պարոն, սանդղակին վրայ լատ մը անձանց քայլերն կը լսեմ:

Պ. Տիւրքի. — Պատասխանորենքն են, կը վայելէ որ գանոնք գրասենեկիդ մէջ ընդունիս:

Կատարեմ. — Պետրոս, ներս հրամուրդ այն պարտեներն. (ինքն ալ Պ. Տիւրքիի հետ գրասենեակ կը մտնեն):

Պետրոս. — Հետ լաւ, Պարոն... ահա եկան... (Առնեստագիտը հետեւէ կ'անցնին, կատարեմն ցրասենեակը երթալու համար)։ — Պատրոն, նուտատիկ տարագրու ու իր կապուտը, ետևենէ կու գայ, և առանց տեսնուելու սրաւը կը մտնէ ու հոն մինակ կը մնայ:

ՏԵՄԻՆԱԼ ԶՈՐՐՈՐԻՄ

ՊԱՂՈՍ ՄԻՈՅԵ

Զարմանք, կ'երևի թէ եղբայրս այսօր հիւրընկալութիւն ունի. պէտք չէ զինքը խռովել... որչափ պիտի զարմանայ... (Ինչպէս պիտի ու բախտաւ գտն տեսնուին համար. այս բարի կատարեմ... (աչքեր կը դարձունէ պատրին աջ կողմը որ յուսանկարները կան) ահա հոն է, ճիշդ ինքն է... կարծես կը ժպտի ինձ (զիշտապիւր հանկելով) բարե եղբայր... իր դէմքը բարութիւն և մարդասիրութիւն կը ցուցանէ... Փողիքը ետ եմ... նա զովասանք չ'ուզեր, ահաւասիկ երկուքին ալ... Կատարեմ հոն է (ցոյց տալով գրասենեակը) և չի գիտեր թէ եղբոր մը սիրտը անհամբերութեամբ կը բաբախէ, փութով զինքը ողջագուրելու... Ա՛հ, աստեք ե՛րբ պիտի անցնին երթան... Ահա դուրս կ'եննեն, ծածկուիմ հոս ու փաղցր և անակնկալ զարմանք մը պատահուեմ իրեն: (Առնեստագիտը դուրս կ'եննեն սենեկէն և իրաւելու կու տան):

ՏԵՄԻՆԱԼ ՀՈԿԵՐՈՐԻՄ

ՊԱՂՈՍ (ծածկեալ), ԿԱՏԱՐԵՄ, ՏԻՒՐԿԻ, ԱՐՈՒՍԵՍԱՆԿԵՍ և ՊԵՏՐՈՍ.

Կատարեմ (Առնեստագիտաց դարձած). — Տե՛մաք, Զեր ցոյց տուած մարդասիրութենէն մեծապէս զգացուած եմ: Գայտնեցէք, ինզրեմ, Առնեստագիտաց Բանձնաժողովին թէ ինչ մեծ արժէք ունի ինձ համար այն պատիւը, որով կը բարեհաճի ինք քաշակերի: Ամեն շանք ի գործ պիտի գնեմ, որպէս զի արժանապէս փոխարինեմ այն յոյսերուն՝ զորս ինքը

յօժարեցաւ ունենալ իմ վրաս: Ողջ լեռուք: (Դուրս կ'եննեն Առնեստագիտը):

Պ. Տիւրքի. — Սիրելի իմ Կատարեմ, այս տեսարանը ամենաբաղդը ու սրտաշարժ զգացում մը ազդեց յոս:

Պետրոս. — Ապա ես, տղու մը պէս լացի: Կատարեմ. — Զեր գործն է այդ, Պ. Տիւրքի. դուք էք շարժառիթն այն շքադիր պատուոյն որ կը տրուի ձեր աշակերտին:

Պ. Տիւրքի. — Կ'ապահովեմ զեզեք, սիրելիս, որ առաջարկը ժողովին մի քանի անդամաց կողմանէ ելաւ և ամենուէն միաձայն հաւանութեամբն ընդունուեցաւ:

Կատարեմ. — Մագիական պատիւ է ինձ համար:

Պ. Տիւրքի. — Ահաւասիկ աշխատութեան արդիւնքը:

Կատարեմ. — Իւ քաշ ուսուցչի մը բարեկամութիւնը... Այո, անբացատրելի երջանկութիւն մը կը զգամ յիս, բայց դեռ կատարեալ չէ: (Հոս Պաղոս կ'անցնի Պետրոսի ետևը):

Պ. Տիւրքի. — Ես կը գուշակեմ քու միտքը, սիրելի բարեկամ. Պաղոսի յիշատակը... քու եղբորդ...:

Կատարեմ. — Այո, եղբայրս կը պակտի ինձ... ո՛հ, եթէ նա ես հոս՝ իմ քովս ըլլար:

Պաղոս (մէկ կողմ հրելով զՊետրոս). — Պատրոն, լոստ կամ քու հրամանիդ եղբայր... հոն էի (կ'ինկնայ կատարեմի վրայ):

Կատարեմ (սաստիկ գգացուած). — Պաղոս... իմ հարազատս... իմ սիրելի եղբայրս... (կը գրկէ զինքը) Ո՛հ, Աստուած իմ, այս չափազանց երջանկութիւն է մէկ օրուս մէջ, մի՛ գուցէ մեռնիմ ուրախութենէս:

Պաղոս. — Ինչ կ'ըսես Կատարեմ, մանաւանդ թէ պիտի ապրինք մէկմեկու համար, միշտ միացած և բնական անբաժան իրարմ:

Պ. Տիւրքի. — Սիրելի բարեկամներ, այս բարեկամութեան տեսարանը ինչպէս քաղցր արտաստուէ կու տայ ինձ...

Պետրոս (աչքերը սրբելով). — Կարելի է, Աստուած իմ, այսպէս լալ:

Կատարեմ. — Աստուած զգայուն մարդուն ուրախութիւնը՝ իր արտաստուցին մէջ գրած է: Ուրախութենէս կու լամ, Պաղոս, որովհետեւ զեզե հոս կը տեսնեմ իմ քովս:

Պաղոս. — Ահա, Կատարեմ, ես հոս եմ, այլ ես չբաժնուելու համար: Այսուհետեւ քու խորհուրդներուդ պիտի հետեւիմ. կ'ուզեմ քեզ նման արուեստագէտ մ'ըլլալ, արժանաւոր աշակերտ այդպիսի վարժապետի մը. (կը սեղմէ սիրով Պ. Տիւրքիի ձեռքը):

Պ. Տիւրքի. — Այդպէս, որդեակ, հաստատ կեցիր բարի գիտաւորութեանդ մէջ:

Կատարեմ. — Պաղոս, ի՜նչ կը տեսնեմ... թե՛ք կապուած:

Պաղոս. — Ո՛չինչ, եղբայր, յիշատակ մը Աճէ... իրոյ պատերազմէն, ոմբակի մը ճաշկումը... թեթեւ վերք մը:

Պ. Տիւրքի (քիչ մը գուաբարեանմբ). — Համբարդութեանդ մէջ գտնէ բան մը շահեցար: Պաղոս. — Փորձառութիւն և քիչ մ'ալ խելք:

Ստուգիւ, հաւատացե՛ք Պ. Տիւրբէ որ զգուեր եմ բոլորովին այն ճամբորդելու յիմար փափաքին, որ դէ՞ռ աւելի հեռուն պիտի տանէր զիս, առանց պահապան հրեշտակի մը՝ զոր կարծես յերկինք ինձ պաշտպան դրած էր։

Կատարեմ. — Քերկովէ նաւապետը։

Պաշտոն. — Այ՛, Կատարեմ, ինքն էր որ խորիւրտարտին արտաբերել վրայ զիս կեցուց։

Կատարեմ. — Ինձ ալ ինքը դրկեց զՊետրոս, ծառայիցը մէջ ընտրեակազայեք. զո՞ն ես Պետրոս։

Պետրոս. — Ոչ, զո՛ն չեմ, այլ հիացած ե երջանիկ եմ քեզի ծառայելուս համար, ու փառք կու տամ ամեն օր Աստուծոյ և Նաւապետին որ ինձի այսպիսի բարի տէր մը տուած է։

Պ. Տիւրբէ. — Վերջապէս, այդ նաւապետը բարի ոգի մ'է, զոր բարեւոր կամ Նախախնամութիւնը ձեր վրայ հսկող դրած է։

Պաշտոն. — Բախտը... Դ՛ն, ո՛չ. պարոն Տիւրբէ, Նախախնամութիւնն է որ իր որդւոց վրայ կը հսկէ... և ես լիովին հաւատք ունիմ Նախախնամութեան վրայ։

Կատարեմ. — Բնաւ, Պ. Տիւրբէ, տեսնուած չէ այնքան քաղցր, այնքան բարի և այնքան մարդասէր անձ մը։

Պետրոս. — Այ՛, ստորգ է, նա ազնիւ մարդ մ'է։

Պաշտոն. — Եւ որուն սիրտը կը բովանդակէ զթութեան և սիրոյ գանձեր՝ երկու որբերուս նկատմամբ։

Կատարեմ. — Իցի՛ւ թէ նա հոս գտնուէր և ակա՛նառես ըլլար այն երջանկութեան, որուն պատճառը ինքն եղաւ։

Պաշտոն. — Յամար ելելէ յետոյ, քովս եկաւ, Պաշտոն, բնաւ ինձ, զիս, տես քու եղբայրդ և իմացուր իրեն՝ իմ ալ փութով զայս ձեր մօտ։ (Դրան քով ձայնէր կը շուռնէ)։

Կատարեմ. — Ինչ է այս շուռնը դրան քով։

Պետրոս. — Կը նայիմ, Պարոն... կարծես դու... որ պիտի կորուսէ։ (Կը բացուի դուռը, Անդրէ կէս զինով ներս կը մտնէ արկղ մը ուսին վրայ առած)։

ՏԵՍԻՆ ԵՎ ՏԵՏԵՐՈՐԴ

ԿԱՍՏՈՆ, Պ. ՏԻՒՐԵՆ. ՊԱՆՂՈՍ, ՊԵՏՐՈՍ
և ԱՆԴՐԷ ԲԱՐՍԵՆԻԱՆԻ

Անդրէ (արկղը վար դնելով). — Ո՛ւֆ... ահա հոս եմ, անիթած հաստախարիսն կայմին ծայրը... (զիսարկի կը բանայ բարեկերտ համար) Ողջուն ամենուր և ընկերութեան։

Պետրոս. — Ինչ կ'ուզես։

Անդրէ. — Ինչ կ'ուզեմ, թրթրակ, ինչ կ'ուզեմ...

Պետրոս. — Այ՛, ինչ կը փափաքիս։

Անդրէ. — Նաւուն ղեկը... պարսխին ծայրը։

Պաշտոն. — Բարէ, գուարթ Անդրէ մարտիլիւս ցին է։

Անդրէ. — Ո՞վ է զիս ամբաստանողը։

Պաշտոն. — Այս ինքն Անդրէն... նաւուն մէջ օրինակ մ'է նաւաստիններուն, բայց ցամաքի վրայ գինւոյ սիկ մը։

Անդրէ (նայելով ու երեքալով սրտնից վրայ). — Վայ թշուառական, կ'երեի թէ ծանօթ եմ այս կողմերս. է՛... բայց այ՛, ճիշդ է, իմ մարդըս է։

Պաշտոն. — Այ՛, բարեկամ, մտանքելու շատ պէտք ունիս մարդ մը ճանչնալու համար։

Անդրէ. — Այ թշուառութեանս... աքերոս, այո՛ ... այնքան չիտաւած են որ լաւ չեմ տեսներ։

Պաշտոն. — Ո՛ր հովը քեզ հոս ձգեց։

Անդրէ (քողոր տեսարանին միջոց իր գրպանէն լուսն մէկ փնտնելով). — Յանձնարարութիւն մը...

Կատարեմ (շտապա). — Թերեւս Քերկովէ Նաւապետն է։

Անդրէ. — Այ՛, պարոնիկ... դու... լաւ... դու... շակեցիր։ Եւ զլուսն ուտէ... պէտք եղածը չեմ գտներ։

Պաշտոն. — Կիներեան մէջ մոռցած չըլլամ։

Անդրէ. — Ո՛չ, չէ, սիրելի Նորավարժս... հերն անիթեմ։

Պաշտոն. — Եւ սակայն յանձնարարութիւնը...

Անդրէ (գրպանէն լուսն մէկ փնտնելով). — Ահա, հուսկ յետոյ գիսարկին մէջ նայելով... Ահա, ատիկ, թշուառականը... հոս է... այս ցընցոտի սահելով՝ սողալով շտեմարանին խորը ինկեր է։ (Կը ներկայացնէ քողոր Պաշտոնին)։

Պաշտոն. — Տնոր և դու զնա հոն անկիւնը կըծկիր։ (Անդրէ երեքալով միևնիւ անկիւնը կ'երարայ) Կատարեմ ուղղուած է նամակը։

Կատարեմ (անկելով և կարողալով գտնել). — « Իմ ամենասիրելի բարեկամս, դու կ'ողջագործես զՊաշտոն, դուք երջանիկ էք, և ես հոն չեմ։ Կը ղրկեմ ձեզի իմ կարասիներս արկղ մը մէջ և վայրկեանէ մը ձեր մօտ կ'ըլլամ։ Հազիւ թէ թուղթս ինկնուտեք, ես ալ ձեր մէջ կը...

Պետրոս. — Քերկովէ Նաւապետ »։ (խօսելով)

Վերջապէս ուր որ ալ է, հիմայ հոս կ'ըլլայ։

Պաշտոն. — Անտարակոյտ։

Կատարեմ. — Ո՛հ, թող զայ, ուրեմն, մեր քաղցր բարեկամութեան և խորին երախտագիտութեան հաւատարմութեան ընդունելու։ (Բաց քողորած դնէն կ'երեի հաւապետն և կ'ընայ լսել կաստունի խօսքերն, առանց տեսնուելու)։

ՎԵՐՋԻՆ ՏԵՍԻՆ

ՆՈՅՆԵՐԸ և ՔԵՐԿՈՒԼԵՆ ՆԱՍԱԳԵՏԸ

Նաւապետ. — Ահաւատիկ եմ... ահաւատիկ եմ, իմ սիրելի բարեկամներս։

Կատարեմ. — Ինքն է, Քերկովէ Նաւապետն է։

Պաշտոն. — Ողջուն, տէր Նաւապետ։

Նաւապետն (երկու կողմերը մէջ կ'ընած և անոնց ձեռքերն իրենից մէջ սեղմելով). — Քա՛յ եղիք օհ... իմ սիրելի բարեկամներս...

Այս բարի կատարեմ որչափ երջանիկ եղաւ կ'ընի տեսնելով և ողջագործելով այս չարահանին. (Պաշտոնի ուսին զարնելով)։

կուստոն. — Երկինք միայն կարող են դատել, ինչ որ իմ սիրտս կը զգայ, անհուն երասխազտութիւն մը՝ այն ուրախութեան համար, զոր այսօր ինձ պարգևեց:

Նաւապետ. — Ի՜նչ դու՛ Պետրոս:

Պետրոս. — Ահաւասիկ կամ, տէր Նաւապետ:

Նաւապետ. — Լաւ ինքե՛ք տարիքի թու տիրոջդ: Պէտքուս. — Եթէ թու յանձնարարութիւնդ ալ չ'ըլլար, տէր իմ, իմ սիրտս նոյնը ընել պիտի տար ինձ:

Նաւապետ. — Զմի՛ կը տեսնեմ հոն անկեան մէջ...

Սնդիկ (մարտիկ նման ցատքելով). — Ահաւասիկ եմ, տէր իմ Նաւապետ:

Նաւապետ. — Ա՜ն, կը տեսնեմ... միշտ նոյն վիճակի մէջ... Այս թշուառական մարտիկացին, ցամաքի վրայ բնաւ այգիներէն դուրս չ'իջներ:

Սնդիկ (կես մը վեր ելնելով). — Կեցցէ՛ տէր իմ Նաւապետ (խնդկեղ վրայ իմ ձգէ):

Կուստոն. — Երեքե՛ք ինձ որ ներկայացնեմ ձեզ Պ. Տիրբէ, իմ յարգելի ուսուցիչ և սիրելի բարեկամս:

Նաւապետ (Պ. Տիրբէի ձեռքը սեղմելով). — Նեւրեցք, պարտն, ձեռքերիդ սեղմելու և շորհաւ կալ ըլլալու երասխազէս սրտով՝ այն ինքե՛ք ինձ համար, զորս առատօրէն ցոյց տուած էք կատարել վրայ: Գալով իրեն, նա ևս կրցել է ցուցնել թէ որքան օգտուած է ձեզմէ, մրցման շքանշանը ընդունելով:

Կուստոն. — Դուք միշտէս գիտե՛ք զայն:

Նաւապետ. — Գիտեմ՝ այն ամեն բան որ ուրախութիւն է իմ սրտիս՝ բարեկամներու նկատմամբ: Հիմա՛ որ երեքդիս իմ միասին կը գտնուիք, երգութիւն այլ ևս չ'արժնուի իւրարմէ:

Կուստոն. — Ո՛հ, Պարոն...

Պաշտոն. — Տէր իմ Նաւապետ...

Նաւապետ. — Այլ ևս պարտն չկայ, այլ ևս նաւապետ չկայ... Կ'ուզեմ, հոս, հայր մ'ըլլալ երկու որդւոց մէջ: Սիրելի բարեկամներս, կը յիշէ՞ք որ ինձ բսեք չէք արդէն ձեր կենաց պատմութեան սկիզբը... ես ալ, հիմա, անոր վերջին մասը պիտի պատմեմ. (ձեռքերը շարժումներ, ամենաւանք Պաշտոնի և Կուստոնի կողմանէ): Անդիւնան կզգաց ծովուն Նաւահանգստի Հրամանատարն կը կորսնցնէ իր կինը, որ մեռնելու ատեն երկու կայսառ զաւակներ թողուցած էր: Հրամանատարն որդեց թողով իր պաշտօնը և դառնալ ի Գաղղիայ՝ հոն հրամանատարութիւն մը ինքնդիւն համար, որպէս զի կարող ըլլայ իր զաւակաց կրթութեան վրայ անձամբ հսկելու: Նաւոր որով ինքը կը ճանապարհորդէր, այլ կոծու թեան հանդիպելով Բրիտանեան փափաց վրայ՝ ընկզմեցաւ: Վտանգի վերջին վայրկեաններուն՝ Հրամանատարն իր անաւոր տագնապներուն մեջ՝ երկու զաւակաց բախտը յանձնեց իր եղբորը՝ որ տեղապահ կը գտնուէր նոյն նաւուն մէջ: Վերջինս մակոյկ մը կ'առնու, անոր մէջ կը զնէ իր երկու թոռներն և թիերու ուժով

դէպի ցամաք կը յառաջէ, ուր հասնելու վրամ էր, երբ ալիք մը կը շրջէ տկար մակոյկը ծովուն մէջ: Տեղապահն ձեռք կը բերէ երկու տղայքն, և չլսած ձեռքով մը լողալով ցաւ մաք կը հասնի, հոն աւազի վրայ կը գնէ իր անգին բեղը: Յետոյ, ամիշխապէս նաւակով մը կը թռչի եղբորը և նաւաստեաց օգնութեան հասնելու, բայց բողբոյն ալ կորստած էին նաւուն հետ՝ այնպէս անցունդին մէջ խորատագնելով: Մահը աչք տուած և սրտովն յուսաբեկ՝ դարձեալ ցամաք կը հասնի տեղապահին՝ իր երկու թոռներն ձեռք բերելու և անոնց համար նուիրելու իր անձը: Երկու որբերն վերցուած էին մարգասէր կնիշմ մը զոր տեղապահն այլ ևս չ'ըրգաւ գտնել: Կուստոն (այխուժով մը). — Այն հրամանատարը, այն տեղապահը...

Պաշտոն. — Դուտով ըսէ՛ շորեղբայր իմ:

Նաւապետ. — Զայն գուշակեցիք դուք, որդեակք, ես ձեր հօրեղբայրն եմ, և բախտը զիս հոս բերաւ յետ անօգուտ խուզարկութեանց:

Կուստոն. — Մեր խնդ հայրը...

Նաւապետ. — Դուք գտաք զայն, Ներեցէ՛ք ինձ, աւելի շուտով զիս չձանձրացնելուս համար, երբ ատաշին անգամ ճանչցայ զձեզ. պատշաճ դատեցի սպասել ու այս յայտնութիւնը ընել այն վայրկեանին՝ երբ փորձառութիւնը ուղղած ըլլայ զՊաշտոն իր ճամբորդելու տխուր մտութեան:

Պաշտոն. — Ո՛հ, շնորհակալ եմ ձեզ որ ազատեցի զիս այն ողբալի հետևանքներէն:

Նաւապետ գիշը մը խնայելով գրպանէն). — Արդ, — կը ճանչնաք այս գիշը:

Պաշտոն. — Զստաւորութեանց պատմութիւնը: Կուստոն. — Այո՛՝ այն գիրքն է որ օր մը պատուհանէն դուրս նետեցի և որ ջեր գլխուն վրայ ինկաւ:

Նաւապետ. — Ստոյգ է. արդ, պիտի պահէք զայս իբրեւ յիշատակ մը այսօրուան երջանկութեան, իբր ընտանեկան ժառանգութիւն մը զոր պիտի թողուք ձեր որդւոց:

Կուստոն. — Այո, զանոնք ճամբորդելու մուրթնէն զգուշացնելու համար:

Պաշտոն. — Սրտանց կ'ընդունիմ այդ բարի գաղափարը:

Նաւապետ. — Նախ քան հրաժեշտ տալու, ուզեցի անգամ մը ևս մարդկութեան նուիրել արիութեանս միացորդը: Յետ արդիւնալի վաստակոյ՝ կրնամ, ուրեմն, փառք և գոհութեամբ հանգչիլ իմ սիրասուն երկու որդւոցս մէջ:

Թորգ. Հ. ՅԱՌԱՐ ՏԻՐՈՅԵԱՆ

ՎԵՐՋ